Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2021-2022 ուստարի)

12-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն *(20 միավոր)*

1. Ե՞րբ է ստեղծվել Միտանիի թագավորությունը. 0,5 մ.
   ա) Ք.ա. XIII դ. բ) Ք.ա. XVI դ. գ) Ք.ա. XIV դ. դ) Ք.ա. IX դ.
2. Ո՞վ է Լևոն 1-ինի՝ մահապատժի ենթարկված որդին. 0,5 մ.
   ա) Մլեհ բ) Թորոս գ) Ստեփանե դ) Ռուբեն
3. Որտե՞ղ է գտնվել Հերմոնի դպրոցը. 0,5 մ.
   ա) Սյունիք բ) Ղրիմ գ) Արցախ դ) Էջմիածին
4. Ո՞վ է 1878 թ. Պետերբուրգում հանդիպել Ալեքսանդր II կայսրին. 0,5 մ.
   ա) Խորեն Նարբեյ բ) Մկրտիչ Խրիմյան գ) Մինաս Չերազ դ) Գրիգոր Օտյան
5. Ո՞ր թվականին է լույս տեսել ռուսահայ առաջին պարբերականը. 0,5 մ.
   ա) 1800 թ. բ) 1810 թ. գ) 1804 թ. դ) 1816 թ.
6. Քանի՞ տարրական դպրոց էր գործում ՀՀ-ում 1919 թ. վերջին. 0,5 մ.
   ա) 450 բ) 300 գ) 261 դ) 1000
7. Ո՞ր թվականին է կազմացրվել 390-րդ դիվիզիան. 0,5 մ.
   ա) 1941 թ. բ) 1942 թ. գ) 1944 թ դ) 1956 թ.
8. Ե՞րբ է ԼՂՀ գերագույն խորհրդի նախագահ ընտրվել Արթուր Մկրտչյանը. 0,5 մ.
   ա) 1991 թ. դեկտեմբերի 10-ին բ) 1992 թ. հունվարի 8-ին
   գ) 1991 թ. սեպտեմբերի 2-ին դ) 1992 թ. հունիսի 2-ին
9. Ե՞րբ է Արևելք ուղարկվել Պետոս զորավարը: 0,5 մ.
10. Ո՞ր թվականին ընդունված ԽՍՀՄ սահմանադրությամբ է լուծարվել Անդրկովկասյան Դաշնությունը: 0,5 մ.
11. Ո՞վ է եղել հայ առաջին քաղաքական լրագրի փաստական խմբագիրը: 0,5 մ.
12. Որքա՞ն ալյուր է ստացվել 1919 թ. մայիսին ԱՄՆ-ից: 0,5 մ.
13. 1919 թ. տեղի ունեցած իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Պետական լեզվի մասին օրենքի ընդունումը
    բ) Ուսուցչական սեմինարիայի բացումը
    գ) Երևանում հայ արվեստագետների ցուցահանդեսի բացումը
    դ) Նախարարների խորհրդի կողմից հանրային մատենադարան հիմնելու մասին օրենքի ընդունումը
    ե) Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հայ-վրացական հաշտության կոնֆերանսի հրավիրումը
    զ) Սերգեյ Մելիք-Յոլչյանի կողմից «Զանգեզուր-Ղարաբաղ» մարզային խորհրդի նախագահի պաշտոնի ստանձնումը
    է) Փարիզի խաղաղության խորհրդաժողովի բացումը
    ը) Փարիզում Հայոց ազգային համագումարի ավարտը
    թ) Փարիզում հայկական պահանջների համատեղ հուշագրի ստորագրումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
    2. Հայաստանի ներքին գործերի ժողկոմ
    3. Ամերիկայի հերոս
    4. Լենինգրադի կուսմարզկոմի առաջին քարտուղար
    5. Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոս
    6. Անդրկովկասի կուսակցական երկրային կոմիտեի առաջին քարտուղար

    ա. Երվանդ Դերվիշյան բ. Միսաք Մանուշյան գ. Աղասի Խանջյան
    դ. Ս. Կիրով ե. Խաչիկ Մուղդուսի զ. Լ. Բերիա

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) Արմավիրը գտնվում է Արարատյան դաշտի արևելյան մասում՝ Արաքսի ձախ ափին, ձգվում է հրաբխային ծագում ունեցող մի շարք բլուրների վրա:

բ) Արտաշատի՝ վերջին տարիների պեղումների բացառիկ հայտնաբերումներից էին Արեգ-Միհրի տաճարը և խճանկարազարդ հասարակական բաղնիքը, ինչն ընդհանրապես հազվագյուտ հանդիպող երևույթ է Հին աշխարհում:

գ) Վասպուրականով էր անցնում միջազգային առևտրի հարավային ուղին, որի վրա առաջացել էին առևտրական խոշոր կենտրոններ՝ Վանը, Բերկրին, Արծնը, Մանազկերտը:

դ) 1850 թ. Երևանի բնակչության թիվը կազմում էր 11 600, իսկ Ալեքսանդրապոլինը (Գյումրի)՝ 12 300:

ե) 1893 թ. տվյալներով՝ Կարինում ապրում էր 40 000, Վանում և Բիթլիսում՝ 30 000-ական մարդ:

զ) 19-րդ դարի երկրորդ կեսին Վաղարշապատի կենտրոնական մասը Էջմիածնի Մայր աթոռի շինարարական գործունեության ծավալման շնորհիվ կառուցապատվել է մի շարք կոթողային շենքերով, որոնց թվում էին Գևորգյան ճեմարանը, նոր վեհարանը, մատենադարանը, աստղադիտարանը:

է) Հայաստանի առաջին Հանրապետության կառավարության ջանքերով տարբեր գավառներում՝ Երևանում, Կարսում, Լոռիում, Փամբակում, Վեդիում և այլուր, բացվում են դպրոցներ՝ թուրք-թաթարների, ռուսների, հույների համար:

ը) Խորհրդային առաջին տասնամյակներին քիմիական արտադրության նոր կենտրոններ են դարձել Ղարաքիլիսան (Վանաձոր) և Չարենցավանը:

թ) 1961 թ. Արփա-Սևան թունելը շահագործման է հանձնվել, որի արդյունքում կասեցվել է Սևանի մակարդակի իջեցումը, ապա սկսել է լճի մակարդակի բարձրացումը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա) Հայաստանում 1-ին դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «բուն հելլենիստական» անունով:

բ) Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:

գ) Գահնամակով սահմանվում էր գահաժառանգության կարգը:

դ) Հայկական բանակում Բագրատունիների օրոք թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված զորամիավորումը կոչվում էր արքունի գունդ:

ե) Վաղ քրիստոնեական պաշտամունքային շինությունները հայտնի են բազիլիկ տաճարներ անունով:

զ) Արշակունյաց Հայաստանում մաղխազը վերահսկում էր օրենքների անխափան կատարումը թագավորության ողջ տարածքում:

է) Արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում կոչվում էր պայլ:

ը) Արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկյան Հայաստանում կոչվում էր մարաջախտ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) 20-րդ դարի սկզբում Թիֆլիսում ստեղծվել է «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն», որտեղ վճռական դեր ուներ հայտնի ազգային գործիչ Ռոստոմը:

բ) 1895 թ. ամռանը Զեյթուն են տեղափոխվել հնչակյան Գարուն Աղասին (Կարապետ Թուր-Սարգսյան), մշեցի հայդուկ Մխո Շահենը (Մխիթար Սեֆերյան) և ուրիշներ:

գ) 1890 թ. հունիսին Կարինում եկեղեցու բակում օսմանյան զորքերը կրակ են բացել հայ ժողովրդի վրա և սպանել ու վիրավորել են 20 մարդու:

դ) Հրայր Դժոխքը ծնվել է 1864 թ. Սասունի Ահարոնք գյուղում, սովորել Մշո Ս. Առաքելոց վանքի դպրոցում, զբաղվել ուսուցչությամբ:

ե) 1901 թ. Հակոբ Կոտոյանը առաջ է քաշում զինված խմբով Ս. Առաքելոց վանք մտնելու և ինքնապաշարման դիմելու գաղափարը:

զ) 1908 թ. հոկտեմբերին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում ստեղծվել է Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը:

է) Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսը և Գերմանիայի դեսպան Հ. Վանգենհայմը 1913 թ. սեպտեմբերի 10-ին Արևելյան Հայաստանի համար կազմեցին 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագիր:

ը) 1916 թ հունիսի 5-ին Նիկոլայ 2-րդը հաստատեց Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված տարածքի կառավարման ժամանակավոր կարգը:

թ) 1919 թ. հուլիսի 5-ի դատավճռով Թալեաթը, Էնվերը, Ջեմալ Ազմին և Նազիմը հեռակա դատապարտվեցին մահվան:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Կարսի կոնֆերանսում հայկական պատվիրակության ղեկավար Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը թուրքերին առաջարկեց Խորհրդային Հայաստանին վերադարձնել միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակները, Կողբի աղահանքերը, քեմալականների կողմից Ալեքսանդրապոլի դեպոյից թալանված գույքը և այլն:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

ա. Ո՞վ է նշված մեջբերման հեղինակը:

բ. Ի՞նչ պաշտոն էր նա զբաղեցնում:

գ. Ո՞ր թվականին է հնչեցվել այս միտքը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Ավարայրի ճակատամարտից հետո հայ նախարարներից շատերն ամրացել էին Միջնաշխարհի, Տմորիքի, …-ի (1), Ուտիքի ամրոցներում և շարունակում էին պայքարը: … թ. (2) հեռավոր աքսորում նահատակվում են … … (3) կաթողիկոսը, Ղևոնդ երեցը և ուրիշներ:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 5200 տարեկան է, բրոնզի դարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:

բ. Հյուսիսում ո՞ր աշխարհի հետ է նրա ամենակարճ սահմանը:

23. Հայ նշանավոր ո՞ր պետական-քաղաքական գործիչն է պատկերված. 0,5 մ.



1. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. 1918 թ. այս ծաղրանկարում ո՞ր պետությունն է տարածքային որոշ շնորհումներ ապահովում Օսմանյան կայսրության համար՝ ի հաշիվ արևելահայկական տարածքների:
բ. Ո՞ր պայմանագրի գռեհիկ արտացոլումն է ծաղրանկարը (նշե՛ք թվականը, ամիսը, օրը և վայրը):

Central Press Association

THREE BONES—A BOUNTIFUL TIP

News Item: Berlin's latest peace terms with Russia detach the regions of Karband, Kars and Batum, Russian territory in Transcaucasia, for Turkey.

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ո՞ւմ հետ էր նույնացվում Եգիպտոսի Միջին թագավորության աստված Ռան. 0,5 մ.
ա) Իսիդաի բ) Ամոն գ) Օսիրիս դ) Օլիմպոս
2. Ո՞վ է հաջորդել Ռուսաստանի ցար Ալեքսանդր 1-ինին. 0,5 մ.
ա) Պավել 1-ին բ) Նիկոլայ 1-ին գ) Եկատիրինա 2-րդ դ) Պետրոս 1-ին
3. Ե՞րբ է ստեղծվել միջազգային օլիմպիական կոմիտեն. 0,5 մ.
ա) 1894 թ. բ) 1907 թ. գ) 1899 թ. դ) 1902 թ.
4. Ո՞վ է «Գիտելիքը ուժ է» խոսքերի հեղինակը. 0,5 մ.
ա) Ֆ. Բեկոն բ) Ռ. Դեկարտ գ) Ի. Նյուտոն դ) Գ. Գալիլեյ
5. Ինչպե՞ս էր կոչվում 1813 թ. Լայպցիգի մոտ տեղի ունեցած ճակատամարտը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Օ. Շպենգլեր	2. Մ. Վեբեր	3. Հ. Իբսեն	4. Ֆ. Ֆուկույամա
ա. սոցիոլոգ	բ. մշակութաբան	գ. դրամատուրգ	դ. պատմաբան

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) 1950 թ. սահմանադրությամբ Հնդկաստանը հռչակվել է խորհրդարանական հանրապետություն:
բ) 1950 թ. հոկտեմբերի 1-ին հռչակվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը:
գ) 1950 թ. Իրանում Մուհամմեդ Մոսադեղի գլխավորությամբ ստեղծվել է Ազգային ճակատը:
դ) 1983 թ. Թուրքիայի ընտրություններում հաղթել է Թուրգուտ Օզալի «Մայր Թուրքիա» կուսակցությունը:
ե) 1949 թ. սկսվել է արաբա-իսրայելական առաջին պատերազմը:
զ) Ճապոնիայում ամերիկյան ռազմակալական վարչակարգը գործել է մինչև 1946 թ.:
է) 1993 թ. սկսած եվրոպական համագործակցությունը կոչվում է Եվրոպական խորհուրդ:
ը) 1951 թ. ստեղծվել է Ածխի և պողպատի եվրոպական միավորումը, որի մեջ մտել են վեց երկրներ:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Ռեալիստական արվեստի նշանավոր ներկայացուցիչ գրողներից 2-ին,
բ. Ռոմանտիկ նշանավոր երաժիշտ-երգահաններից 2-ին:

9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է ընդհանուր գունանշված:
բ. Ո՞ր արքայի գահակալության օրոք եղած սահմաններն են առավելագույնս ընդգրկված:

10. Ռուս հայտնի ո՞ր գիտնականը և լուսավորականության շարժման ներկայացուցիչն է պատկերված. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)



ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված անձը:
բ. Նշե՛ք ձախ կողմում նստած անձի անունը և ազգանունը:
գ. Ո՞ր թվականին տեղի ունեցած ճգնաժամն է նկարում արտացոլված:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2022 թ.